ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1263-Ա « 01 » ապրիլի 2024թ.

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N97-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N97-Ա որոշումը.

1.«Ջրային կառույցների» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) լուծարելու նպատակով, ստեղծել լուծարման հանձնաժողով՝ համաձայն հավելվածի

2.Հանձնարարել լուծարման հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացնել Ընկերության լուծարման գործընթացը:

3. Լուծարումից հետո, 20-օրյա ժամկետում, Ընկերության պարտատերերի պահանջը բավարարելուց հետո, մնացած գույքը և գույքային իրավունքները հանձնել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել լուծարման հանձնաժողովի նախագահի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
01.04. 2024թ.
հ. 1263-Ա որոշման

ԿԱԶՄ
«ՋՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ

Արթուր Համբարձումյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ

Արման Տեր-Թովմասյան	«Ջրային կառույցների» ՓԲԸ-ի տնօրեն
Բագրատ Ասլիկյան	«Ջրային կառույցների» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահ
Հրանուշ Ներսիսյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության վարչական բողոքների ուսումնասիրության բաժնի պետ
Կամո Բաղանյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետի տեղակալ
Վահան Առուշանյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության աղբահանության և սանմաքրման բաժնի պետի պաշտոնակատար
Սերգեյ Պետրոսյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության կազմակերպությունների

եկամուտների և ծախսերի ծրագրավորման և
մոնիթորինգի բաժնի գլխավոր մասնագետ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**